

5.2. Ժողովրդագրական իրավիճակը

ՀՀ վարչատարածքային բաժանման համար հիմք է հանդիսացել 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը, ըստ որի ՀՀ տարածքը բաժանված է 11 մարզի, ներառյալ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով (12 թաղային համայնքներով), 47 քաղաքային և 871 գյուղական համայնքների:

ՀՀ վարչատարածքային բաժանումը 2000թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

	Համայնքների թիվը			
	ընդամենը	քաղաքային	թաղային	գյուղական
Հայաստանի Հանրապետություն	930	47	12	871
ք. Երևան	12	-	12	-
Արագածոտն	114	3	-	111
Արարատ	97	4	-	93
Արմավիր	97	3	-	94
Գեղարքունիք	92	5	-	87
Լոռի	113	8	-	105
Կոտայք	67	7	-	60
Շիրակ	119	3	-	116
Սյունիք	113	7	-	106
Վայոց Ձոր	44	3	-	41
Տավուշ	62	4	-	58

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակն կազմել է 3803,6 հազ. մարդ: Հանրապետության առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-1999թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակն ավելի քան 622 հազ. մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Ուստի ՀՀ առկա բնակչության թվաքանակն արտահոսքի հետևանքով զգալիորեն պակաս է:

Հարկ է նշել, որ սկսած 2000թ. մայիս ամսից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով, իսկ հունիս ամսից՝ ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ՝ Բավրա, Գոգավան և Բագրատաշեն սահմանային հատման կետերից:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ

հազար մարդ

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Հայաստանի Հանրապետություն	3803,6	2535,6	1269,0
ք. Երևան	1247,5	1247,5	-
Արագածոտն	167,7	47,0	120,7
Արարատ	311,1	98,9	212,2
Արմավիր	322,7	123,3	199,4
Գեղարքունիք	278,9	102,2	176,7
Լոռի	394,0	264,6	129,4
Կոտայք	329,3	200,9	128,4
Շիրակ	362,2	243,3	118,9

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
Սյունիք	164,1	115,3	48,8
Վայոց Ձոր	69,3	28,4	40,9
Տավուշ	156,8	63,0	93,8

Բնակչության ընդհանուր թվաքանակի 26,3 տոկոսը կազմել է աշխատունակ տարիքից ցածր, 60,0 տոկոսը՝ աշխատունակ տարիքի, իսկ 13,7-ը՝ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը: Տարեցտարի ավելանում է աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը, որը և իր ազդեցությունն է թողնում բնակչության «ծերացման» վրա: Նշված հարաբերակցությունը բնակչության թվաքանակում հանգեցնում է աշխատունակ տարիքի վրա ծանրաբեռնվածության մեծացմանը, այսինքն ամեն 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին են ընկնում մոտ 700 ծերեր և երեխաներ:

Համաձայն «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի, 2000թ. համար հանրապետությունում աշխատանքային կենսաթոշակային տարիք է համարվում կանանց համար՝ 57,5, իսկ տղամարդկանց համար՝ 62,5 տարին:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռատարիքային կազմի 1999թ. և 2000թ. տարեսկզբի դրությամբ

(հազար մարդ)

	1999			2000		
	ընդամենը	կին	տղամարդ	ընդամենը	կին	տղամարդ
Ամբողջ բնակչությունը այդ թվում՝	3798,2	1954,0	1844,2	3803,4	1954,4	1849,0
0-4	227,1	107,2	119,9	212,8	99,9	112,9
5-9	351,4	170,8	180,6	327,8	159,0	168,8
10-14	387,5	189,0	198,5	380,9	185,7	195,2
15-19	354,5	173,3	181,2	365,0	178,4	186,6
20-24	310,2	152,3	157,9	317,7	155,4	162,3
25-29	280,0	137,3	142,7	283,2	138,7	144,5
30-34	286,4	149,7	136,7	278,8	143,0	135,8
35-39	330,9	175,1	155,8	322,9	170,5	152,4
40-44	294,9	156,5	138,4	310,4	164,7	145,7
45-49	214,9	115,6	99,3	229,4	123,3	106,1
50-54	134,5	73,0	61,5	152,2	82,7	69,5
55-59	134,1	73,1	61,0	114,5	63,2	51,3
60-64	160,6	88,4	72,2	170,8	94,2	76,6
65-69	135,7	75,7	60,0	127,5	71,0	56,5
70-74	111,1	62,9	48,2	115,7	65,3	50,4
75-79	38,1	24,3	13,8	48,0	30,4	17,6
80-84	25,7	17,1	8,6	22,6	14,9	7,7
85 և բարձր	20,6	12,7	7,9	23,2	14,1	9,1

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող որոշիչ գործոնը բնակչության բնական աճն է (90-ական թվականներին «թափ առած» արտագաղթի գործոնին զուգահեռ), բացառապես որի հաշվին էլ տեղի է ունենում բնակչության թվաքանակի ավելացումը:

Հանրապետությունում բնական աճի պատկերը

(մարդ)


	Հունվար-հունիս			
	բացարձակ թվեր		1000 բնակչի հաշվով	
	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.
Ծնվածներ	17579	17447	9,4	9,3
Մահացածներ	12317	12457	6,6	6,6

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Հունվար-հունիս			
	բացարձակ քվեր		1000 բնակչի հաշվով	
	1999թ.	2000թ.	1999թ.	2000թ.
<i>այդ թվում՝</i>				
մինչև 1 տարեկան	265	260	15,1*	14,9*
Բնական աճը	5262	4990	2,8	2,7
Ամուսնություններ	6070	5295	3,2	2,8
Ամուսնալուծություններ	587	599	0,3	0,3

2000թ. հունվար-հունիսին ՀՀ բնակչության բնական աճը, որն ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության (որտեղ բնական աճը բացասական է, իսկ միգրացիոն աճը՝ դրական), դրական է, այսինքն ծնունդները գերակշռում են մահերին, 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 5,2 տոկոսով, որը պայմանավորված է հիմնականում ինչպես ծնունդների նվազմամբ 0,8 տոկոս, այնպես էլ մահացածների քվաքանակի աճմամբ 1,1 տոկոսով:

Ծնվածների և մահացածների քվաքանակը հունվար-հունիսին



ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2000թ. հունվար-հունիսին

(մարդ)

	Ծնվածներ	Մահացածներ	Մինչև 1 տարեկան մահացածներ	Բնական աճ	Մմուսնություններ	Մմուսնալուծություններ
Հայաստանի Հանրապետություն	17447	12457	260	4990	5295	599
ք. Երևան	5190	4536	91	654	1756	336
Արագածոտն	845	516	14	329	227	14
Արարատ	1515	888	23	627	346	40
Արմավիր	1532	942	17	590	437	32
Գեղարքունիք	1568	864	22	704	510	12
Լոռի	1719	1373	21	346	446	47
Կոտայք	1497	886	27	611	473	49
Շիրակ	1558	1203	27	355	526	37
Սյունիք	863	493	6	370	235	12
Վայոց Ձոր	360	181	6	179	109	8
Տավուշ	800	575	6	225	230	12

*) 1000 ծնվածի հաշվով

Ծնելիության մակարդակի նվազման պայմաններում կտրուկ իջել է կանանց ծնելիության տարիքային գործակիցների ցուցանիշներն ինչպես տարիքային առանձին խմբերում,

այնպես էլ ամբողջովին վերցված, այսպես 100 պտղաբեր տարիքի կանանց հաշվով (15-49 տարեկան) միջինում բաժին է ընկել 119 երեխա՝ բնակչության վերարտադրության համար անհրաժեշտ 215-ի դիմաց:

Բնակչության վերարտադրությունը բնութագրող կարևոր ցուցանիշներ են հանդիսանում նաև ծնելիության բրուտտո* և նետտո** գործակիցները: Ինչպես վկայում է բնակչության վերարտադրության բրուտտո և նետտո գործակիցների դինամիկան, որը համապատասխանաբար կազմել է՝ 1990թ. 1.277 և 1.237; 1995թ.՝ 0.798 և 0.780, 1999թ.՝ 0.585 և 0.573: Այսինքն նշված ցուցանիշները փոքր են 1-ից, այլ կերպ ասած, չի ապահովվում բնակչության ոչ միայն ընդլայնված, այլև պարզ վերարտադրությունը:

Վերարտադրության կարևոր ցուցանիշներից է կյանքի սպասվելիք տևողությունը՝ հաշվարկած ծննդից: Այսպես, 1999թ. այն կազմել է 72.3 տարի, այդ թվում տղամարդկանց մոտ՝ 70.7, կանանց մոտ՝ 75.5:

Բնակչության բնական շարժի մյուս կարևորագույն ցուցանիշը մահացությունն է: 2000թ. հունվար-հունիսին մահացածների բացարձակ թվաքանակն նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է, սակայն մահացության ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով մնացել է նույն մակարդակին: Հարկ է նշել, որ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (որում գերակշռել է մահացությունը սրտի իշեմիկ հիվանդություններից՝ 68 տոկոս) և չարորակ նորագոյացություններից, հատկապես մարսողական և շնչառական օրգանների, իսկ կանանց մոտ կրծքագեղձի հիվանդությունից մահացության մակարդակը հանրապետությունում տարեցտարի աճում է:

**Մահացությունն ըստ պատճառների
(ՀՀ ՔԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված մահվան ակտերի հիման վրա)**

(մարդ)

	1999թ. հունվար- հունիս	տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	2000թ. հունվար- հունիս	տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ
Մահացածների թիվը դրանցից՝ ըստ պատճառների.	12317	100	12457	100
արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	6419	52,1	7056	56,6
դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից	420	3,4	457	3,7
դրանցից. ինքնասպանություններ	30	0,2	24	0,2

* Միջին հաշվով քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը:

** Միջին հաշվով քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը, որոնք հասել են մոր տարիքին:

	1999թ. հունվար- հունիս	տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	2000թ. հունվար- հունիս	տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ
սպանություններ	40	0,3	53	0,4
նորագոյացություններից	1857	15,1	1951	15,7
շնչառական օրգանների հիվանդություններից	811	6,6	841	6,7
մարսողական օրգանների հիվանդություններից	404	3,3	374	3,0
վարակիչ և մակաբուժական հիվանդություններից	140	1,1	122	1,0
այլ հիվանդություններից	2266	18,4	1656	13,3

2000թ. հունվար-հունիսին կյանքի առաջին տարում երեխաների մահացության պատճառների կառուցվածքում՝ պերինատալ շրջանում առաջացած վիճակից (կյանքի առաջին


շաբաթում) և բնածին արատներից, այսինքն այն հիվանդություններից, որոնք սերտորեն կապված են մոր առողջական վիճակից, մահացությունը դեռևս բարձր է և 2000թ. հունվար-հունիսին այն կազմել է 66,9 տոկոս:

2000թ. հունվար-հունիսին մինչև 5 տարեկան երեխաների մահացության կառուցվածքում գերակշռում է մինչև 1 տարեկանների մահացությունը (82,3 տոկոս): Հարկ է նշել նաև, որ մահացությունը մինչև 5 տարեկանների մոտ (1000 կենդանածնի հաշվով) կազմել է 18,1 պրոմիլ՝ տղա երեխաների մոտ այս ցուցանիշն ավելի բարձր է:

Հանրապետությունում մայրական մահացության ցուցանիշի (100000 կենդանածնի հաշվով) նվազման պայմաններում 1999թ. հունվար-դեկտեմբերին հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում գրանցվել է մահացության 12 դեպք, որով պայմանավորված մայրամահացության գործակիցը կազմել է 32,9; իսկ 2000թ. հունվար-հունիսին՝ 40.1 (7 դեպք): Հարկ է նշել, որ միայն մարտ ամսին տեղի է ունեցել մայրամահացության 3 դեպք:

2000թ. հունվար-հունիսին գրանցված ամուսնությունների քանակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 12,8 տոկոսով և կազմել 5295, իսկ ամուսնալուծությունների քանակը աճելով 2 տոկոսով՝ կազմել է 599:

Գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները



Հանրապետությունում 2000թ. հունվար-հունիսին 1000 նոր կազմավորվող ամուսնական զույգերին բաժին է ընկել 113 ամուսնալուծություն:

Վերջին տարիներին անձնագրային ռեժիմի թուլացման, ինչպես նաև սահմանային անցման կետերում միգրանտների հաշվառման համակարգի անկատարելիության պայմաններում նրանց զգալի մասը դուրս է մնում վիճակագրության տեսադաշտից:

Միգրացիայի ծավալներն ավելի իրատեսական գնահատելու նպատակով անցկացվել են մի շարք հետազոտություններ, ինչպես նաև ուսումնասիրվել են ավիացիայի միջոցով ուղևորափոխադրումների ծավալները:

Ուղևորափոխադրումների ծավալները 1992-1999թթ., ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների

(հազար մարդ)

Տարիները	Մեկնել են	Ժամանել են	Միզրացիոն աճ (+,-)
1992	865,5	636,9	-228,6
1993	831,0	689,9	-141,1
1994	597,8	470,0	-127,8
1995	507,0	469,5	-37,5
1996	517,4	496,9	-20,5
1997	504,9	473,6	-31,3
1998	439,7	415,3	-24,4
1999 ¹	322,5	311,8	-10,7 ¹

Ինչպես երևում է աղյուսակից, նախորդ 8 տարիների ընթացքում օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողների թվաքանակին 622 հազ. մարդով¹, սակայն սա ամբողջական պատկերը չէ, քանզի, տրանսպորտի այլ տեսակներով՝ երկաթգծով և ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների վերաբերյալ տվյալներն առկա են միայն 2000թ. հունվար-հունիս ամիսներին:

Ըստ ՀՀ «Երկաթգծի» դեպարտամենտի հաշվառված տվյալների, հանրապետությունից մեկնողների թվաքանակը (7.5 հազ.) գերազանցել է ժամանողների թվաքանակին (2.2 հազ.) 5.3 հազ. մարդով: Ըստ ՀՀ Ազգային անվտանգության նախարարության սահմանապահ զորքերի վարչության (Գոգավան և Բազրատաշեն սահմանային կետեր) և ՀՀ պետական եկամուտների նախարարության մաքսային վարչության (Բավրա) հաշվառված տվյալների, մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողների թվաքանակին 6.6 հազար մարդով:

Օդային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալները 1999թ. և 2000թ. հունվար-հունիսին, ըստ ամիսների

	1999թ.			2000թ. հունվար-հունիս		
	Մեկնել են	Ժամանել են	միզրացիոն աճ (+,-)	Մեկնել են	Ժամանել են	միզրացիոն աճ (+,-)
հունվար	22,3	18,3	-4,0	21,9	16,0	-5,9
փետրվար	19,2	19,2	0	18,8	15,4	-3,4
մարտ	19,9	20,4	+0,5	17,9	16,6	-1,3
ապրիլ	22,9	20,9	-2,0	21,4	19,0	-2,4
մայիս	24,4	22,6	-1,8	22,9	19,5	-3,4
հունիս	27,8	30,8	+3,0	27,0	28,3	+1,3
հուլիս	34,3	34,3	0			
օգոստոս	44,3	35,7	-8,6			
սեպտեմբեր	29,9	29,0	-0,9			
հոկտեմբեր	25,7	26,3	+0,6			
նոյեմբեր	22,3	21,5	-0,8			
դեկտեմբեր	29,5	32,8	+6,9			
ընդամենը	322,5	311,8	-10,7 ¹			

Ընդհանուր առմամբ, 1999թ. 12 ամիսների ընթացքում մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողներին 10,7 հազ. մարդով, իսկ 2000թ. հունվար-հունիսին այն արդեն կազմել է 15,1 հազ. մարդ, ինչը 3,5 անգամով գերազանցել է 1999թ. առաջին կիսամյակի համապատասխան ցուցանիշը: Հատկանշական է, որ և 1999թ. և 2000թ. հունիսին ժամանողների թվաքանակն է գերազանցել մեկնողների թվաքանակին, որը պայմանավորված է հարազատներին ամառային ամիսներին այցելությանը:

¹ «ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցում հրատարակված 1999թ. տվյալները (էջ 125 և 127) ճշգրտվել են ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 11.07.2000թ. ներկայացված ամփոփ հաշվետվության ճշգրտված տվյալների:

Ըստ 1998-99թթ. ՀՀ վիճնախարարության կողմից իրականացված «Միգրացիայի ընտրանքային հետազոտության» տվյալների, էմիգրացիայի հիմնական դրդապատճառն աշխատատեղերի բացակայությունն է, բավարար կեսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը, Հայաստանում զարգացման հեռանկարների նկատմամբ հավատի բացակայությունը, սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը: